

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (լացի կիրակի եւ ամսն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿԻ» խմբագրութիւնը յայտնում է, որ կիրակի, դեկտեմբերի 22-ին,

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մահվան տաճանամեակի առթիւ իր յիշմանքի գերեզմանատան եկեղեցում կը մատուցվի պատարագ, ապա գերեզմանի վրա կը կատարվի հոգեհանգիստը եւ կը բացվի մահարձանը: Պատարագը կը սկսվի առաւօտեան ժամի 10-ին, իսկ հոգեհանգիստը ճիշտ 12-ին:

Կիրակի, ամսիս 22-ին, վանքի մայր եկեղեցում, ու պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստը Մօսկվայում սնտամանակ վախճանված

ԻՍԵԼԱԿ ԻՍԵԼԱԿԵԱՆ ԺԱՄՆԱՐԵԱՆԻ

համար. Ս. պատարագը կը սկսվի 10¹/₂ ժամին, իսկ հոգեհանգիստը 12¹/₂-ին: 1—2

Կիրակի, դեկտեմբերի 22-ին, ու Նշան եկեղեցում, կը մատուցվի պատարագ եւ ապա հոգեհանգիստը վաղաժամ վախճանված

ԳԱՐԻԷԼ ԶՈՒՐԱՐԵԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆՅԻ

յիշատակին, որի մասին հանգուցեալի մայրը, Նինա Բօմանովնա Միրզոյեան իր որդոց հետ յայտնում է բարեկամներին եւ ծանօթներին: Պատարագի սկիզբն է ժամի 11-ին, հոգեհանգիստը—12-ին: 1—1

ԶՈՒՄՐՈՒԹ ԶԱՐԳԱՐԵԱՆՅԻ

մահվան տարեգարձին, կիրակի, դեկտեմբերի 22-ին, Մոսկու ու Գէորգ եկեղեցում լինելու է պատարագ եւ հոգեհանգիստ, որի մասին Հայրապետ Զարգարեանցը իր զուտակների հետ յայտնում է ազգականներին եւ ծանօթներին: Պատարագի սկիզբը 10¹/₂ ժամին, հոգեհանգիստը 11¹/₂ ժամին: 1—1

Ետիֆ Մօխեմէդի, Մարիա Ետիֆօվնա, Մօյսէյ եւ Օլգա Տէր-Աբրահամեանները յայտնում են իրանց ազգականներին, ծանօթներին եւ

ԳԻՕՐԳԻԻ

ընկերներին, որ կիրակի, դեկտեմբերի 22-ին, նրա մահման քառասունքի օրը, հոգեհանգիստ կը կատարվի ու Աստուածածնի եկեղեցում, որ գտնվում է Միխայիլովսկայա փողոցի վրա, Բէալական դպրոցի հանդէպ: Պատարագի սկիզբը ցերեկվայ 11 ժամին, իսկ հոգեհանգիստը 12 ժամին: 1—1

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Մեր համակրողներին. — Ներքին Տեսչութիւն. Մամուլի տեսչութիւն. Գրիգոր Արծրունի եւ մանուկները. Նամակ Կարսից. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեծ պետութիւնների միջամտութիւնը Արեւելքում. Արտաքին լուրեր. — Հնդկաստան. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւլիզար:

ՄԵԶ ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻՆ

«Մշակի» հիմնադրի մահվան տաճանամեակի լրանալը եւ լրագրի հրատարակութեան երեսնամեակի բոլորելը առիթ է տալիս մեր բարեկամներին արտայայտելու սրտի բուռն գեղմունքներ եւ անելու խորհրդածութիւններ «Մշակի» ցոյց տուած գործունէութեան մասին:

Բոլորովին ճիշդ է, որ «Մշակը» իր գոյութեան ընթացքում չը ծածկեց մեր կեանքի տխուր կողմերը, չը շոյեց, չը շողորթեց ազգային պակասութիւնները, գլուխ չը խո-

նարհեց մամոնայի ներկայացուցիչների առաջ եւ չը շլացաւ փարիսեցիական յորհորներով:

«Մշակը» ցանկացաւ լինել հասարակական խղճմունքի արժան ներկայացուցիչ եւ լուսաւոր ու աւաճողէմ ձգտումների անխնջ քարոզիչ: Այդ էր նրա կոչումը իր հիմնած օրից, այդ եղաւ նրա կոչումը գոյութեան ընթացքում. այդ էլ պէտք է լինի նրա կոչումը առաջիկայում: Օրվայ խնդիրները փոխվում են, հասարակական հետաքրքրութիւնը նոր ճիւղաւորութիւններ է ստանում, լրագրի քննութեան նիւթը փոփոխութիւնների է ենթարկվում, բայց նրա հիմնական վերաբերմունքը դէպի շրջապատող երեւոյթները մնում է մի եւ նոյնը—այն է՝ դարձնել հասարակական խնդիրները հրապարակական ընկալութեան առարկայ, բովանդակել նրանց, զեկալար ունենալով դիտութեան եւ քաղաքակրթութեան լուսաւոր սկզբունքները, եւ հարթել ճանապարհ ժողովրդի ընդարձակ զարգացման համար:

Պետութիւնը իր օրգաններով, հասարակութիւնը իր հիմնարկութիւններով, լրագիրը իր հրապարակախօսական եւ ընդհանուր գրական յօդուածներով, ունեն կատարելու կարենք դեր, որի լրջութիւնը երբեք չէ մոռացվել «Մշակի» կողմից նրա գոյութեան ընթացքում: Եւ նա օգտվել է ամեն մի դէպքից, ամեն մի առիթից յիշեցնելու, որ ազգաբնակչութեան բոլոր խաւերը եւ դասակարգերը պէտք է իրանց ընդհանուր գործակցութեամբ նպաստեն հայաճեղու խաւարը եւ տգիտութիւնը մեր երկրից եւ տարացնելու եւրօպական կեանքի կուլտուրական հիմունքները:

Մենք լաւ գիտէինք, որ ամեն մի մարտում, ամեն մի կռիւ տգիտութեան եւ փարիսեցիութեան դէմ պէտք է յարուցանել մեր դէմ դժգոհների եւ թշնամիների լէզոններ, մենք գիտէինք, որ աւանդութիւնը, բուրժուական աշխարհայայտեացքը, կապիտալի յաւակնութիւնը եւ ասիական դործավարութեան հեղինակութիւնը պէտք է զինվին մեր դէմ իրանց բոլոր ոյժով, բայց մենք նախատեսել էինք զրկանքները եւ գոհիւրը եւ վճռել էինք առաջ դնալ առանց ընկճվելու եւ յետ քաշվելու:

Երեսուն տարի անցնելուց յետոյ մենք ոչ միայն չենք զգում մեզ յոգնած եւ թուլացած մեր կուրից, այլ նոր եւ նոր ոգեւորութիւն ենք զգում մեր մէջ աւելի եւս եռանդուն եւ ընդարձակ շարունակելու սկսած գործը:

Դա է մեր ուխտը երեսուն տարուց յետոյ, դա է մեր պատասխանը մեզ համակրող մեր բարեկամներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս շաբաթը կարող ենք անուանել Գ. Արծրունու շաբաթ: Մենք անդադար ստանում ենք զանազան տեղերից հեռագիրներ, նամակներ, որոնցով հայ հասարակութեան զանազան խաւերը իրանց խորին յարգանքն են յայտնում հայոց մեծ հրապարակախօսի յիշատակին նրա մահվան տաճանամեայ տարեգարձի առթիւ:

Տեղական ուսումնական եւ մի քանի խօսքով յիշել Գ. Արծրունու մահվան տաճանամեակը, իսկ Բագրի ուսումնական թերթերը յատուկ յօդուածներ տեղադրելով մեր լրագրի հիմնադրի յիշատակին:

«Բագր» լրագիրը, դեկտեմբերի 19-ին, տաճանամեակի օրը, իր աշխատակից Ստարցիկի բերանով, ահա ինչ է ասում. «Տաք տարի առաջ, դեկտեմբերի 19-ին, Թիֆլիսում մեռաւ հայ հրապարակախօս Գ. Արծրունին, «Մշակ» լրագրի խմբագիրը: Եւ Թիֆլիսում էի նրա թաղման:

Հիանալի մէջ առաջին անգամ եւ վկայ էի, թէ ինչպէս ժողովուրդը յարգանք է մատուցում հրապարակախօսին, ժողախիստին: Տաք հազար մարդից աւելի գնում էր Արծրունու դաղաղի ետեղի:

Ճաւ տեսալ հասարակ, պատաստում չորեքով գիւղացիներ, տեսալ կոչապատ ձեռքերով մշակներ եւ նրանց հետ միասին չքեղազարդ տիկիներ, ուսանողներ, գիմնազիստներ, բժէիկներ, փառաբաններ:

Ամբողջ հայ ժողովուրդը հաւաքվել էր վերջին յարգանքը մատուցանելու մտքի հանգուցիւր հերոսին:

Ամբողջ իր կեանքը նա նուիրել էր լրագրին, ամբողջ կեանքը, գրեթէ երեսուն տարի, նա ժողախիստ էր:

Ճերտուն տարի տանջալից, ծանր եւ նեղարդային աշխատութիւնն նա ամենախիտակ ժողախիստ էր, համոզված մաքառող հասարակական ճշմարտութեան համար:

Ձերմ սիրելով իր ազգը՝ նա ամբողջովին, ամբողջ իրան տուել էր նրան:

Ազատ ազգայնական նախապաշարունակներից,

նա կոչում էր իր ազգը դէպի լոյս, ազատութիւն:

Նա արթննցնում էր նրա մէջ լաւագոյն, նուիրական իղձեր երջանկութեան, ճշմարտութեան մասին:

Նա նրա ազնիւ քաջագործութիւնը չանցաւ անհետանալ: Երախտագէտ ազգը դեռ նրա կենդանութեան ժամանակ ճանաչեց նրան իր հոգեւոր պարագլուխ:

Արծրունի միայնակ չէր. նրա հետ էր նրա սիրեցեալ ժողովուրդը:

Քայց որքան բարոյական ոյժ, որքան հերոսական կռիւ պէտք է կրէ ժողախիստը, որպէս զի նուաճէ աւերիւր եւ դաժնայ նրա առաջնորդը:

Եւ Արծրունին չընկաւ ընկճված ժողովրդի անտարբերութեան առաջ, նա նուաճեց նրան իր սիրով, իր ջերմ հաւատով դէպի նրա ազգայն երջանկութիւնը...

Դրանից աւելի բարձր եւ լաւ վարձատրութիւն ժողախիստի համար չը կայ: Արծրունու յիշատակը չի ջնջվի ժողովրդական սրտից: Թող մեռած լինի նա, թող այլ եւ գոյութիւն չունենայ նա, բայց հերոս-ժողախիստի պայծառ գէմը միշտ կը կանչէ ժողովուրդը դէպի ճշմարտութիւն եւ լոյս:

Նոյն օրը, «Бакинскія Извѣстія» լրագիրն եւ «Գրիգոր Արծրունու յիշատակին» վերնագրով մի յօդուածի մէջ, հետեւան է ասում.

«Յանձնին Արծրունու ոչ միայն հայկական մամուլը, այլ եւ ամբողջ հայոց հասարակութիւնը զրկվեց իր տաղանդաւոր, անձնուէր եւ եռանդուն աշխատաւորների մէկից: Արծրունին պատկանում էր այն գործիչների թւին, որոնք իրանց անսովոր, եռանդուն եւ կարող ընդունակութեամբ անցկացնելու իրանց դաւանած իդէաները, ամբողջ էպօխա են ստեղծում հասարակութեան կեանքի մէջ»:

Ոստերով ապա «Մշակ» եւ Արծրունու լրագրական գործունէութեան մասին, ուսու լրագիրը այդպէս է վերջացնում յօդուածը.

«Արծրունու հրապարակախօսական սկզբունքներից մինչ ազգերի մերձեցումն էր եւ նրանց ինտելիգենցիաների միաբան աշխատութիւնը ամբողջ լուսաւորութեան համար: Ահա դրա համար Արծրունու անունը ժողովրդականացաւ եւ վաղեւում էր յարգանք առանների, վրացիների, թուրքերի առաջադէմ շրջաններում»:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ (Իմ յիշողութիւններից)

1889 թւի ծննդեան տօներին եկել էի Թիֆլիս տեսնելու իմ 9 տարին նոր լրացած աղջկանս, որ օրիորդաց ինստիտուտում գիշերօթիկ աշակերտուէի էր: Տօներին տանում էի երեխային տիկին Մէլիք-Աղաջախեան Արծրունու մօտ, որ լինում էր եւ տիկնոջ քեռորդին («Մշակի» այժմեան ժառանգներից մէկը): Պատահում էր, որ երեխայիս ամբողջ օրով թողնում էի Արծրունու տանը, շատ անգամ, ճաշից յետոյ, Գրիգոր Արծրունին փայփայելով ասում էր «Մ...իկ, հիմա եւ ու գու խաղա՛նք, նստի՛ր մօտս, լաւ, լաւ բաներ պատմեմ»:

Եւ Գրիգոր Արծրունին իր հանգստութեան թանգ ժամերը նուիրում էր մանուկների զուարճութեանը, իրան յատուկ համով-հոտով ասելիքներով, նստում էր երեխայի հետ խաղի, երկուսը, կարծես հասակակիցներ, կարտ են խաղում, ծրլում, ծիծաղում, եւ ու տիկնոջ հետեւից նայում-դիտում էինք...

Գրիգոր Արծրունին, որ խորիմ ու երբեմն էլ տխրադէմ էր իր անզուգական գրական աշխատութիւնների ժամանակ, այժմ ուրախազէմ, ժպտեւ երեսին աղջկան հետ ընկերացել էր, ասես ինքն էլ մանուկ լինէր. սրբան մեծ ու գրաւիչ էր երեսում նա մանուկների զուարճանքին, սրբան գուլթ, ինչքան համբերութիւն (մայրական սրտիցս են բղխում այս խօսքերը): Պատմութեամբ, հիացնում էր երեխային, մանկական անմեղ ծիծաղն էր Գրիգոր Արծրունու վարձատրութիւնը:

Որպէս զի հանգիստ տամ անմոռանալի Գրիգոր Երեմէնիին, առում էի, «Մ...իկ, բաւական է, թող Գրիգոր Երեմէնիյն հանգստանայ, գնանք»։ «Ձէ, չէ, մայրիկ, մի քիչ էլ խաղա՛ք, յետոյ գնանք»։ Նոյնն էր պնդում և Արծրունին Երեմի նրա միակերպիները մանուկներն էին։ Ախ, երանի թէ Գրիգոր Արծրունին թողած լինէր մեզ—հայերիս բացի «Մշակից» և իր հարազատ զաւակները իր վեհ հոգով ու ազնիւ սրտով կրթված,—դաստիարակած ու մեծացրած...

Ա. Մ. Ա.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻԺ

Դեկտեմբերի 10-ին

Նախկին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Կարսի ճիւղի գրադարան-ընթերցարանը նոյեմբերից վերջնականապէս անցել է քաղաքին։ Գրադարանը, որ մինչև այժմ ներկայացուցաներով ու ընթերցարանից ու բաժանարարից ստացված փողերով էր պահպանուած իր գոյութիւնը՝ յոյս կայ, որ այսուհետև աւելի լաւ վիճակի մէջ կը լինի, որովհետև քաղաքն էլ իր կողմից է խոստացել օգնել տարեկան 800 րոբլի նպաստ տալով։ Առաջ տարեկան բաժանորդը հինգ րոբլի էր տալիս, այժմ նա տալիս է միայն երեք րոբլի։ 50 կոպէկ ամսավճարի տեղ այժմ 30 կոպ. է։ Իսկ օրավճարը մուտքի համար, որ կամաւոր էր (սովորաբար 3 կոպ.) այժմ 2 կոպ. է։ Իրաւունք չը կայ մի հատորից անց զիրէ վերջնելու, ինչպէս և 10 օրից աւելի պահելու մօտը, հակառակ դէպքում օրական 1 կոպ. տուգանք։ Գրաւակների փոխարէն այժմ ստորագրութիւն է պահանջվում։ Գրադարանապետի պաշտօնում մնում է նոյն պարոնը՝ Հ. Տ. Պապստրեան։

Կարսում երբեմն լինում են ժողովրդական ընթերցանութիւններ, բայց պատմածներին նայելով անհետաքրքիր են անցնում։ Կէտք է ի նկատի ունենալ այս բանը, որ քաղաքի բնակչութեան մեծամասնութիւնը հայ է, ուրեմն և ընթերցանութիւնը լսողների մեծ մասն էլ հայերն են կազմում, իսկ ընթերցանութիւնը լինում է նրանց շատ քիչ հասկանալի լեզուով—առեւերէն։ Քանի որ նպատակը ժողովրդին զարգացնելն է, լաւ չէր լինի, եթէ երբեմն էլ ընթերցանութիւնը ժողովրդի մայրենի լեզուով լինէր։

Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներն էլ բացառապէս հայերից են։ Զարիւրից աւելի 12 տարեկանից մինչև 40 տարեկան աշակերտներ ամենայն սիրով յաճախում են ուսումնարան նոր գրադարանութիւն սովորելու, կամ մի քիչ իմացածի վրա մի բան աւելացնելու։ Մեծ մասը արհեստավարներ ու արհեստավարների աշակերտներ են։ Քաղաքային տարրական ուսումնարանին ուսուցիչն է պ. Յ. Թաւրիսեանի աշխատութեամբ տեսուչ պ. Դէմիդկին թոյլ տուեց հայերէն էլ դասախօսելու նրանց, որը յանձն առաւ տղերքիս գրողը՝ Պետրէ Երեմեան, թէ ինչ ուրախութիւն պատճառեց աշակերտներին այդ բանը։

Խաչ. Տէր-Ենօքեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Գ Ի Ի Լ Ի Զ Ա Ր

I ԳՐՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Գ ա լ ու ս տ ե ա ն ց (կրկին գրելով և Աղաջանի) Թող Աստուած օրհնի ձեզ, իմ որդիք (Յեսոյ փոքր ինչ խիստ ձայնով)։ Բայց Աղաջան, իմացիր, որդիս, որ հարստանիքդ լինելու է երբ պատերազմը կը վերջանայ, հիմա ժամանակ չէ երջանիկ լինել, երբ մեր եղբայրներից շատերը կոտորվում են, շատերը իրանց ունեցածը կորցնում են։ Պատերազմը կը վերջանայ և ես կը բաղդաւորացնեմ (ձեռք է դնում նրա նախաձեռն)։ Ես կը պարգևատրեմ այդ տխուր ճակատը և ամենքս բաղդաւոր կապրենք։

Աղաջան, Ախ, հայր, ես չեմ պահանջում որ հարստանիքը իսկոյն լինի, բայց ես վախեւոր եմ պատերազմից, ոչ թէ ինձ համար, այլ քեզ համար և Գիւլիզարի համար։ Դու տեսնում ես, դու չէիր հաւատում որ պատերազմ կը լինի, երբ որ ես քեզ այդ ասում էի... Դեռ չէ, արա ինչ որ ես քեզանից քանի անգամ եմ խնդրել, անցիր առաջ օտմանը Գիւլիզարի, հետ, գնա նրա հետ Երևան, իսկ ես կը մնամ տունը պահպանելու համար։ Վտանգը

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Դեկտեմբերի 17-ին

Երէկ, երկուշաբթի, առաւօտեան քաղաքի մէջ տարածվեց լուր, թէ Իսահակ Ժամհարեանը սպանվել է Մօսկվայում։

Այսօր Ղազանչեցոց եկեղեցում տեղի ունեցաւ պատարագ և հոգեհանգիստ։ Ներկայ էր թուրք հոգեւորականութիւնը և մի ստուար խումբ թուրք հասարակութեան կողմից։ Ներկայ էր թեմական դպրոցի ուսուցչական խումբը բոլոր աշակերտներով։ Պատարագին երգում էր ըստաձայն երգեցիկ խումբը։ Գ. և պիսկոպոս Գառնակերեան խօսեց մի երկար դամբանական։

Քաղաքի կողմից հետադրով պատերկում է գնել հանգուցեալի դագաղի վրա մի պսակ 300 ր. արժողութեամբ։ Նաև ուղարկված է Մօսկվա ելք։ Ժամհարեանցներին ցուակցական հեռագրի Նոյնը արեց և Ղազանչեցոց եկեղեցու երէցփոխը Առաջիկայ կիրակի քաղաքային հիւանդանոցում տեղի կունենայ դարձաւ հոգեհանգիստ։

Դեկտեմբերի 15-ին, կիրակի, պ. Պապստրեանի թատրոնական դահլիճում տեղի ունեցաւ դրականական-երաժշտական առաւօտ, իսկ երեկոյեան ներկայացում և պարեր, որ տուեցին տեղիս բնակական դպրոցի ուսուցչական խումբը և նոյն դպրոցի աշակերտները։ Թէ առաւօտը, թէ ներկայացումը անցան լաւ, հասարակութիւնը գոհ մնաց։ «Առաւօտ» վերջում աշակերտները թուով 22, ստացան գովասանական թերթեր։

Մի ուրախալի երեւոյթ, որի վրա մենք առանձնապէս շեշտում ենք, այն է, որ մեր դրացի և համաքաղաքացի թուրքերից ստացան գովասանական թերթեր 10 հոգի, որ կազմում է առաջագէտ կոմիտէի մօտաւորապէս 50% պրօցենտը։

Սերմացան

ՆԱՄԱԿ ԽՐԱՅԳՐՈՒԹՅՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 19-ին

Թող տուէք, ինչդեհ, ողբալու անմոռանալի ընկերակ է ազնիւ մարդու վաղաժամ մահը։

Վահան Նալբանդեանը մէկն էր այն անձներէ, որին մի անգամ ծանօթանալուց յետոյ չէր կարելի չը սիրել։ Աստուած նրան մեծամեծ ընդունակութիւններ չէր տուել, սակայն, իր խնամ ու լուրջ բնաւորութեամբ, իր անհուն աշխատասիրութեամբ և զարմանալի տոկոսնութեամբ նա ձեռք էր բերել այն, որ նրա ընկերներից քչերն են ձեռք բերել։ Նա չարուհակ գանգատվում էր, որ մեր հասարակութիւնը դեռ անընդունակ է գիտական լուրջ յօդուածներ մարտնչելու, ուստի և նա ստիպված է գրելու այն, որին ինքը շատ մեծ արժէք չէր տալիս։ «Մշակի» ընթերցողներին շատ լաւ էր յայտնի Նալբանդեանի իր բանիւն և իմաստակը յօդուածներով։ Ինձ վրա, իբրև ընկերոջ, պարտականութիւն կայ յայտնի կացուցանելու այն, ինչ որ հասարակութիւնը չէր կարող գիտնալ, այդ նրա հեղ, բարի և առաքելի բնաւորութիւնն էր։ Իսկ նրա անբասիր վարք ու բարքը, նրա անարատ սիրտն ու հոգին ամբիժն է մաքուր էին ինչպէս մի մանկանը։ Յանձնի Նալբանդեանը մենք կորցրինք մի մարմնա-

մեծ կարող է լինել. պատերազմի բաղդը փոփոխական է։

Գ ա լ ու ս տ ե ա ն ց (մայալով)։ Ձէ, որդի, հաւատաւ ինձ, մեզ համար ոչինչ վտանգ չը կայ։ Ռուսները քրիստոնեաներին, նրանք մեզ չեն նեղացնի, կը գան այստեղ, մենք նրանց լաւ կընդունենք և կը հիւրավարենք։ Ռուսները կերթան, թիւրքերը կը գան, մենք նրանց հետ իսկ լաւ ենք... Թիւրքերի մէջ չը կայ մի մարդ որ չը պատուի իմ տունը և չը լինի ինձ պարտական գոնէ մի բանով։ Մենք վախենալու բան չունենք, Աղաջան, ոչ մէկը և ոչ միւսը չեն զիպչի մեզ և չուտով կը սկսենք աւելի ուրախ ապրել։

Աղաջան, Իսկ քիւրդերին մոռանում ես, հայր, որոնք ոչնչացրին իմ ամբողջ ընտանիքը...

Գ ա լ ու ս տ ե ա ն ց. Քիւրդերը ինչ ոյժ ունեն և ինչպէս կը համարձակվեն նրանք մեզ դէմ գնալ, մեզ վնաս տալ։ Ձէ, որդի, դու ի՞նչ ես քեզ երեակայական վտանգներ ստեղծում։ Քիւրդերը միթէ կը համարձակվեն իրանց կեղտոտ առօրձականներով դուրս գալ մեր հրացանների և առաջ գործի դէմ։

Աղաջան, Երանի թէ ես սխալված լինէի։ Բայց ասում են, որ քիւրդերը շատ զենք ունեն, նրանց ցրտապետները ժողովուրդ են և խորհուրդ են անում հրաւիրել նրանց պատերազմի... Դու միթէ չես նկատում ինչ նենգաւոր աչքերով է նայում Գիւլիզարի վրա այդ

ցեղ մաքրութիւն և պարկեշտութիւն, այդ բաների իսկական իմաստով։

Եւրօպայի հայ ուսանողութեան ամենախոնարհ և գործունէայ անդամներից մէկն էր հանգուցեալը։

Նա մէկն էր այն ուսանողներից, որ կազմակերպեցին և հիմք դրին «Եւրօպայի հայ-ուսանողական միութեան», որ արդէն մի արդիւնատու և տեսական մարմին դառնալու բոլոր նշաններն ունի։ Ես ողբում եմ իմ ազնիւ ընկերոջ և կեանքով ու գործով իրաւաբան Վահանի մահը։

Գր. Վանցեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իւրեմի համալսարանը իր հիմնարկութեան 100-ամեայ յօրեկեանի առիթով պատուաւոր անդամ է ընտրել հետեւեալ անձներին,—կոմս Լ. Տօյստօյին, երկրագործութեան և պետական կառավարչների միւստր Երմօլօվին, անասնոր Տագանցիկին, ակադեմիկոս Պիպինին, Կոնստանտին, Նիկիտին, Օլիգանիկօվին, Լաւրիշկին, Լաւրանիկուն, Վորոնինին, Բիստրեկին, Մարսիմ Կովալեւսկուն, պրօֆէսոր Մենդելեւին, Արգեմեյիին, աւագ քահանայ Գորչակօվին, Էնկէլմանին, Պաւլօվին, Պաւսալօվան, Սեչենօվին, Գէրիէին, Մեչնիկօվին, Զիշերին և ուրիշներին։

Առաջիկայ տօներին չքաւորներին բաժանելու համար ստացանք տիկին Սարուխանեանից 3 րոբլի։

Բազուի նաւթարդիւնաբերողների XVI համաժողովը միջնորդութիւն էր յարուցել կառավարութեան առաջ Բազուի լեռնային ուսումնարանի հիմնելու իրաւաբանութեամբ, պարտաւորութեամբ յանձն տրեւելու տարեկան 30,000 րոբլի տալ այդ ուսումնարանի պահպանութեան համար։ Բազուի քաղաքային վարչութիւնն ևս իր կողմից երեք հոդաւածին էր նշանակել ուսումնարանի շէնքի կառուցման համար, թողնելով երեք տեղից մէկի ընտրութիւնը երկրագործութեան միւստրներին։ Տիֆլիսի միւստրները միմեկին հարցաւորեցին, թե ինչպէս կը պատշաճ լիարժեք այս առաջարկութիւնը, պատճառաբանելով իր մերժումը միջոցների սղութեամբ։

Առաջիկայ երկուշաբթի, դեկտեմբերի 23-ին, Արտիսական ընկերութեան թատրոնում, Թիֆլիսի հայ գերաստական մշտական խումբը կը ներկայացնէ, ի նպատակ դերասան Տէր-Դուլիսի, Սուրբուհեանի «Պաթալա» պիէսը։ Սուրբուհեան, որ հասարակութիւնը իր ներկայութեամբ կը քաջալերէ հայկական թատրոնի վեհաբան տաղանդաւոր դերասան Տէր-Դուլիսեանին։

Առեւտրի և մանուֆակտուրայի Թիֆլիսի կո-

միտետի քիւրդ Մըստօն, երբ որ գալիս է քեզ մօտ իր կաշիները ծախելու համար, Իսկ նրա պէսները շատ կան, որոնք ապստում են որ մեզ մի գործադրութիւն պատահի, կորցնալու, մեզ օգնանելու և մեր աղջիկներին գերի առնելու համար։

Գ ա լ ու ս տ ե ա ն ց. Այդ քո երեակայութիւնն է, որդի, միամիտ լինի, ոչինչ վտանգ չը կայ, բոլորը լաւ կը լինի... Թող ժողովուրդն, ես իմ տեղից չեմ հեռանալ, կը գան ուսուցիչներ և այն ժամանակ քիւրդերը իրանց անօրէն գլուխը կը խոնարհեն նրանց առաջ և մենք կապրենք ինչպէս այժմ և աւելի ուրախ... Եստ մի մտածիր, Աղաջան, այլ ցանկացիր որ Մօսկվայի թագաւոր ուղարկի իր օրդերը և օգնի մեզ իր բարի ձեռքով նոր կեանքով քրիստոնեաների հետ ապրելու (Գիւլիզանից լսեց)։ Այսօր ուսուցիչներ մտնում են մեր քաղաքը, գնա որդի քաղաքի դարձ, ուրիշների հետ ընդունիր նրանց, և եթէ նրանց զօրքի մեծաւորներից մէկը կը կամենայ մեր տանը իջնել, խնդիր նրան մեր տանը։ Հիւրասիրութեամբ, իմ որդի, մեր պապերից մեզ թողված մի գովելի անաղաւ է, որ մենք էլ պէտք է պահպանենք և կատարենք։

Աղաջան, Գնում եմ, հայր, և հրամանք կը կատարեմ։ (Մի քանի քայլ և անում դէպի միջին դուռ)։

Գ ա լ ու ս տ ե ա ն ց. Բայց ո՞վ է բախում զուռը։ Տես Աղաջան, ո՞վ է եկողը։

միտետի նիստում, որ տեղի ունեցաւ դեկտեմբերի 8-ին, քննվեց Վիէնայի աւստրո-ուսական տնտեսական ընկերութեան առաջարկութիւնը։ Հիմնել Աւստրիայի մայրաքաղաքում մի առևտրական մեղէնուհի Կոմիտէն որոշեց խորհրդակցութեամբ հրաւիրել տեղական արդիւնագործներին և գործարանատէրերին և նրանց աշակերտներին ժողովել ու վիէնայ ուղարկել կովկասեան ապրանքների մի հաւաքածու։

ԱՅՈՒՄԱՐԱՔԻՆ մեզ գրում են. «Մեր խաղաղ քաղաքում էլ գողութիւններ են պատահում։ Մի քանի օր առաջ պ. պ. Յ. Դիւանեանի և Գ. Հաւարթեանի վաճառատնի նախկին գործակատարը երեկոյեան, դռները փակելուց առաջ, դատագործի ներս է մտնում վաճառատնի ներքնայարկը, թափաբերում, ապա դռները կողպելուց յետոյ բոլոր մեծաքանակները, մօտ 7 հազար րոբլու ապրանք, հաւաքում է քսակների մէջ, որ որոշած ժամին, երբ համախոհները նշան տան դրսից, ինքը դուռը բանայ ներսից, և գողացած ապրանքը դուրս տանում։ Բայց հէնց այդ ժամին, բուրդովին պատահական կերպով, մարդիկ են գալիս վրան և ներսի գողը ապրանքը թողնելով և հետը վերցնելով բաւական կանխիկ գումար և թղթեր՝ դուրս է վաճառում։ Դրանից յետոյ ոստիկանութիւնը շուտով բռնում է նրա հոգեւ թաղկացած գողերի այդ խումբը և յանձնում քննիչին։ Նախկին գործակատարը արգէն խոստովանել է մանրամասնութիւնները, իսկ փողերը և շատ բանալիները գտել են ձերբակալվածներից մէկի մօտ, որը սակայն չարուհակում է մերժել։ Գողերը վառել են գողացած դիւրամանները, որով յանցանքը ծանրանում է։ Այսօր էլ ձերբակալվեցին երկու անձնաւորութիւններ, որոնք փորձել էին բան գողանալու պ. Ներ. Դարբինեանի մագաղկները»։

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Այսօր, դեկտեմբերի 15-ին, պ. Պապստրեանի թատրոնում կայացաւ Շուշու բնակական դպրոցի գրական-երաժշտական հանդէսը։ Դպրոցի վարչութիւնը նախօրեք առանձին տոմարներով հրաւիրել էր պատուաւոր հիւրերին։ Հանդէսի ծրագիրը բաւական ճոխ էր կազմված։ Հանդէսը սկսվեց ժամի 12-ին։ Ուսուցիչներից մէկը համառօտակի կարգաց բնակական դպրոցի պատմութիւնը։ Այնուհետև աշակերտները կարգապէս զանազան ոտանավորներ։ Պիէլայի գանձան 25-ամեակի առիթով 7-րդ դասարանի աշակերտ Աղաժալեան կարգաց սլաւօն աղգերի ազատման առիթով իր գրած շարադրութիւնը։ Հիմալի կերպով երգում էր ուսուցիչ պ. Պրօֆֆօվի կազմած երգեցիկ խումբը, իսկ ուսուցիչ պ. Լիւնբերգ սովորեցրել էր աշակերտներին ջութակների վրա նուագել։ Գանձան օպերաներից կոտորներ։ Հասարակութեան ուշադրութիւնը գրաւեց 7-րդ դասարանի աշակերտ Նալբանդեանի առաջնորդութեամբ նուագող աւիական օրկեստրը, նրանք երգեցին «Մեր հայրենիք» և մի հայ ժողովրդական երգ։ Հանդէսի վերջում աշակերտները ստացան ուսման առաջագինութեան համար գովասանական թերթեր»։

Աղաջան. (մօտենալով դրանք եւ բաց անելով)։ Դա քիւրդ Մըստօնն է, հայրիկ (ճեւաճում է քիչ դէպի աջ կողմը, դրան մեզ երեւում է Մըստօնի գլուխը)։

Ն ր ա ն ք և Մ ր ս տ օ

Մ ր ս տ օ (Մտենալով եւ գլուխ ցալով)։ Ողջոյն քեզ աղա, ողջոյն քո տանը։

Գ ա լ ու ս տ ե ա ն ց. Աստուած քեզ օգնական Մըստօն, նստիր, բարի լինի դալուստը, լինի մեր հիւր։ Բայց գիտեմ թէ ինչի ես եկել (ծրվալ-ցալով), քեզ դեռ պարտ եմ քո երէկ ինձ վրա ծախած կաշիների փողը։

Մ ր ս տ օ. Էհ, ինչ ես ասում աղա (նստելով)։ Ես գիտեմ թէ քեզ վրա փողս չի կորչի։ Քեզ մօտ փողերս աւելի ապահով են քան թէ իմ գրապնում։ Ձէ, ես եկել եմ քեզ տեսութիւն անելու, քեզ իմ ողջոյնս տալու։

Գ ա լ ու ս տ ե ա ն ց. Լաւ Մըստօն, հաւատում եմ ես էլ քեզ հետ խօսելու ունեմ։ Քիչ սպասիր այստեղ, ես իսկոյն փողերդ բերում եմ (վեր է կենում եւ դուրս է գնում դէպի ձախ կողմը)։ Իսկ դու, Աղաջան, գնա, ուր որ գնում էիր։

Աղաջան. (Մի քանի քայլ և անում դէպի միջին դուռ, լսելով օտու գալով դէպի Մըստօն առանձին, բայց բարձր)։ Գիտեմ թէ ինչ նպատակով այդքան յաճախ գալիս ես մեր տունը, թափառական։ Քո նպատակը աղուէաների կաշիների ծախելն է, գիտեմ, դու աչք ունես Գիւլիզարի վրա։ Աստուած վկայ, ձեռքդ չես լիզ

գեկտեմ-
նուսա-
նալարու-
նալարու
որոշեց
անա ար-
տերին և
վիշնա
ի հաւա-

թեր Այնուհետև խուսիք երգեց ուսական
հինգը Զանգեզուր վերջացաւ ժամի 2/3-ին, ժո-
ղովուրդը ցրվեց ուրախ տրամադրութեան
տակ: Այսօր երեկոյան խանութներէն թաւ-
րօնուէ լինելու է նոյն դպրոցը: աշակերտական
ներկայացումն, մուտքը ձրի է, բայց հրաւերով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՄԵՆ ՊԵՏՈՒԹԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՆԸ Ա-
ՐԵՆԵԼՔՈՒՄ

II

Մենք ասացինք, որ մակեդոնական և հայոց
հարցերը լուծելու համար միակ ազդեցիկ մի-
ջոցը ֆրանսիացի գիտնական համարուէ է
Եւրօպական մեծ պետութիւնների կոնֆերն-
ցիայի գումարումը և Բերլինի դաշնագրի 23 և
61 յօդուածները իրադրութեամբ:

Այս առաջարկութիւնը, ասում է հեղինակը,
մեծ ընդունելութիւն է գտել ուսու, անդադ-
րաւ, աւստրիական և իտալական մամուլի մե-
ծամասնութեան կողմից: Միայն գերմանական
մամուլը այնքան նպաստաւոր չէ խօսեց,
կարծէք հազմադրելով մի հրամանի: Մենք
չենք կարող առել, որ Մակեդոնիայի և Հայաս-
տանի հարստահարմանը վտառի աղաղակ-
ները արձագանք չեն գտնում: Գերմանիայում
բայց Արեւելքի գործերում, ինչպէս և հարաւո-
յին Աֆրիկայի գործերում, կայսերական կա-
ռավարութիւնը աշխատում է ցոյց տալ, որ
զգացումների և մարդասիրութեան նկատուե-
ները ոչ մի ազդեցութիւն չունեն իր վրա: Նա
կամենում է տեսնել Թիւրքիայի մէջ միայն մի
կիշնոտ, որին պէտք է լինային նրան լաւ չա-
հարորդել կարողանալու համար: Սակայն, չը
նայելով գերմանական քաղաքականութեան այդ
հասանքի հաշիւներին, չը նայելով նրա անտար-
բերութեան դէպի հարստահարմանը տան-
ջանքները, մենք չենք կարող անկարելից վը-
կանք հանդիմանալ Մակեդոնիայի և Հայաս-
տանի մարտիրոսների համար: Ինչ տեղ էլ որ
բռնէ Գերմանիան Եւրօպայում, նա դեռ Եւրօ-
պա չէ: Կրկնէի նոր օրինակը մեզ ցոյց է տա-
լիս, որ Արեւելքում Եւրօպան կարող է գործել
ստանց Գերմանիայի թոյլտուութեան կամ ա-
ջակցութեան:

Անցնելով ապա այն հարցին, թէ երբ կօ-
նֆերնցիա գումարվի, մակեդոնացիները և
հայերը ինչպէս պէտք է պաշտպանեն իրանց
դատը, Լըրուա-Բօլիէօ ասում է, թէ Արեւել-
քի հարստահարմանը, որոնց ազատութեան
համար մենք ցանկանում ենք կօնֆերնցիայի
գումարումը, ձեռք են բերել Եւրօպայից մի
իրաւաբանական ապացոյց և այդ կողմից Մա-
կեդոնիայի և Հայաստանի քրիստոնեաները,
ինչպէս և Ռումինիայի հրէաները համայնա-
վիճակի մէջ են: Նրանք ամենքը կարող են
հինգել իրանց պահանջները մի և նոյն ակտի
վրա, որ կրում է Թիւրքիայի և մեծ պետու-
թիւնների հանդիսաւոր ստորագրութիւնը:
Բայց այդ հանդիսաւոր ակտը, այդ իրաւաբա-
նական ապացոյցը ինչպէս պէտք է նրանք ա-
ռաջ տանեն, ներկայացնեն կարող են իրանք
գործել, թէ ուրիշները պէտք է նրանց տեղ

ազատվի, եթէ դարձեալ կը շարունակեն թա-
փառել մեր տան չորս կողմը...

Մըստօ (նեգաական եւ նեգաւոր ժայիսով
եւ նեգաւոր հայեացք գցելով Աղաջանի եւ ձախ
դրան վրա եւ գլուխը օտոժելով բարձր ձայնով):
Տեսնե՛ք...

Աղաջան. (Մի քայլ կասաղած նայում է
նրա վրա, յետոյ գլուխը խոնարհեցնելով մեա-
ծուքեան մեջ): Տեսնե՛ք... Աստուած գիտէ,
ինչ է սպասում մեզ... (Շատաւով դուրս է գնում):
Մըստօ (մեծաւ):

Մըստօ. Յանդուգն, լիքը տղայ: Մահից
չես ազատվի: Կը տեսնես եթէ մահը իմ ձեռ-
քից չես ստանալ: Շատ չի անցնի և քս սիրելի
Գիւլիզարն էլ, այդ հպարտ աղջիկը, իմը կը
լինի... Ռումաները եկան, լաւ... Բայց այստեղ
ի՞նչ միշտ չեն մնայ. կերթան Հայաստանի խոր-
քը, այն ժամանակ զերբդի սուրը ձեզ, անպի-
տան հայերին չի ինչպիսի: Ձեր արիւնքը հեղեղի
նման կը վազի, ձեր անիւրին կրակ կը տանը,
ձեր կաշիքը ու ձեր կանաչը մեր ձեռքը
կընկնեն... Ինչ կարող էք անել... (կասաղած
եւ վառված հայեացքով): Այդ սուրը վկայ, Գիւլ-
իզարը իմը կը լինի...

Գալուստեան և Մըստօ

Գալուստեանց (նրա մեկնելով): Ահա իմ
պարտքս, Մըստօ, վեր առ (սալիս է փող):

Մըստօ (անմեղ դեմքով): Ինչի եւ
չտապում, աղա (ձեռք մեկնում է եւ փողը
վեր է առնում) իմ ամբողջ հարստութիւնն էլ,
իմ կինն էլ, իմ որդիներն էլ որ քո ձեռքումը

գործեն: Ոչ, ասում է հեղինակը, մակեդոնա-
ցիները և հայերը չեն կարող իրանց դատը ի-
րանք վարել: Եւ այդ այն պատճառով, որ
նրանք պետութիւն չեն կազմում, նրանք իրա-
ւաբանական անձնաւորութիւններ չեն: Նրանք
դիվանագիտի և միջազգային իրաւունքի ա-
ռաջ գոյութիւն չունեն, ուստի և իրաւաբա-
նական ոչ մի միջոց չունեն ներկայացնելու ի-
րանց ապացուցական ակտը, այնպէս որ Բեր-
լինի դաշնագրի ամենահանդիսաւոր և ճշգրիտ
յօդուածները մնում են նրանց ձեռքում մեռած
տառ: Բայց ինչ որ մակեդոնացիները և հայերը
չեն կարող անել իրանց համար, միթէ ուրիշ-
ները չեն կարող անել նրանց համար: Միթէ եւ-
րօպայի պետութիւնները, մանաւանդ Բերլինի
դաշնագիրը ստորագրողները, իրաւունք չու-
նեն պահանջել Թիւրքիայից նրա ստանձնած
պարտաւորութիւնների իրադրութեամբ: Իրանք
պետութիւններ են պարտաւոր ստիպել Թիւր-
քիային իրադրուել Բերլինի դաշնագիրը, այ-
լապէս Թիւրքիան երբեք, ինքնաբերաբար, չի
կատարի իր պարտաւորութիւնները:

Յուսանք, որ ուսուցիչ արտաքին գործերի
մինիստր կոմս Լամզորֆի ճանապարհորդու-
թիւնը, ինչպէս և սպասում է, կարողանայ
առաջ բերել Մակեդոնիայի և Հայաստանի
թշուառ քրիստոնեաների ազատութիւնը խա-
ղաղաբարական ճանապարհով: Արդէն Եւրօպա-
կան մամուլը այն կարծիքն է յայտնում, որ
քրիստոնեայ նահանգապետների նշանակումը
կամ Եւրօպական կոնտրոլը ընթացիկ գոր-
ծադրութեան ժամին անհնարն է: Նախակ
չեն Բերլինի դաշնագրի տրամադրութիւն-
ներին: Ն. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս հաղորդում է «Neues Wiener
Tagebl.» լրագիրը—ապրիլական թագաժա-
ռանդուհի Լուիզիան և նրա եղբայր Էրցհերցոգ
Լէօպոլդ Ֆերդինանդ իրանց հետնապու-
ռաձ թողնել նամակներ, որոնց մէջ բացառ-
ում են իրանց արած քայլերի չարժանութի-
ւոյնը: Թագաժառանգուհին յայտնում է, որ ոչ
մի պայմանով չի վերադառնալ իր ամուսնու-
մօտ: Թագաժառանգուհու եղբայր Էրցհերցոգ
Լէօպոլդ-Ֆերդինանդ յայտնում է, թէ ինչեւ կա-
տարեալպէս համարալի է իր քրոջ հետ—և ա-
ւելացնում է, որ ինչեւ կարում է ամեն յարա-
բերութիւն պարտի հետ, մինչև որ պրինցու-
հի Լուիզիայի գործը չը վճարի նրա ցանկու-
թեան համեմատ: «Fremdenblatt» հաղոր-
դում է, որ Էրցհերցոգը հաղորդում է, որ
իրան հանձն Հարստութեան տան անդամների
մէջ (որի համար արդէն տեղի ունեցաւ
Փրանց-Յոլիշի կայսրի համաձայնութիւնը)
գերատեսչների Աղաջանի հետ պատկերով հա-
մար: Աղաջանի 28 տարեկան է, և պատանի
պաշտօնեայի աղջիկ է Իզաբել:

—«Berl. Tag.» լրագրի Դեղզիայի թղթա-
կիցը հաղորդում է իր խօսակցութեան մասին
նախնական պայտի բարձրատեսչան անձե-
րից մէկի հետ պրինցուհի Լուիզիայի փախչելու
տարիքով: Այդ պաշտօնեան յայտնեց, որ թա-
գաժառանգուհի Լուիզիայի դէպքը հոգեբանօ-
րէն շատ պարզ է նրան և նրա ամուսնուն մօտ
ճանաչողների համար: Պրինցուհին կրթված կին
է և տաղանդաւոր բնաւորութեան տէր: Նա
լաւ երաժշտագէտ է, լաւ նկարիչ է, գրում է
ոտանաւորներ: Մի և նոյն ժամանակ նրա ա-

լիւնն, եւ տեղի հանդիման, աւելի ապահով կը
լինի... Դժուար ժամանակներ հասան աղա...

Գալուստեանց. (նստելով). Ինչ բանից
երկիւղ ունես, Մըստօ: Ռումաները մեզ չեն հե-
ղացնի:

Մըստօ. Ով է ասում: Բայց պատերազմը
լաւ բան չէ, աղա: Մենք աղքատ մարդիկ ենք,
որսորդութեամբ ենք պարապում ու ձեզ, հա-
րուստ հոգերի վրա է մեր բոլոր յոյսը: Դուք
էք մեր որսածը առնում ու մեզ կերակրում:
Ճշմարիտ է, ուսանելը մեծ ոյժ ունեն, բայց
Աստուած չանի, եթէ բազմը փոխվեցաւ, մու-
սուլմանները էլ կը դան, ձեր տները կը քան-
դեն, ձեզ կոշտացնեն,—այն ժամանակ մենք
ինչ պէտք է անենք: Մենք խօս ձեզանով ենք
ապրում:

Գալուստեանց. Աստուած ողորմած է
Մըստօ: Ռումաների հետ լաւ վարվելը և նրանք
մեզ կը պաշտպանեն... Ամեն բանն էլ լաւ
կերթալ:

Մըստօ. Աստուած քո խօսքը լսի, աղա:
Բայց եթէ մեր մէջ պէտք կունենան, եթէ քեզ
դժբաղդութիւն պատահի, մեզ մօտ արի, աղա:
մեր վրաներում պատապարթի: Բո Գիւլիզար-
րին էլ հետք բեր: Մենք ձեզ մեր սրբոյ կը
պաշտպանենք:

Գալուստեանց. Աստուած քեզ վարձա-
րի, Մըստօ, քո բարի առաջարկութեան հա-
մար: Բայց գործերը այնքան վատ չեն լինի,
ամեն բան լաւ կերթալ, դրա մասին եւ հա-
տատ յոյս ունես:

մուսինը,—և դա գաղտնիք չէ ոչ ոքի համար,—
շատ կոպիտ քնտրութիւն ունի, և ընդհա-
րուած նրանց մէջ անխուսափելի էր: Թագա-
ժառանգուհին շատ դժբաղդ էր իր ամուսնա-
կան կեանքի մէջ: Վաղուց արդէն մեծ տարա-
ձայնութիւններ կային ամուսնի մէջ: Պրին-
ցուհին, բայց դրանից, մի քանի տարի առաջ
իմացաւ, որ իր ամուսինը յարաբերութիւններ
ունի պալատական թատրոնի դերասանուհի-
նրից մէկի հետ: Հասարակութեան մէջ վաղուց
արդէն խօսում էին, որ Թագաժառանգի ըն-
տանի մէջ տեղի ունեն խիստ տարաձայնու-
թիւններ և որ թագաժառանգը վատ է վար-
վում իր կնոջ հետ: Թագաժառանգուհին մի
քանի անգամ ինդրեց իր հօրից, Տօսկանական
մեծ դերից, թող տալ իրան մարդուց բաժան
ապրել, բայց հայրը բաց է ի բոց մերժում էր
իր աղջկայ ինդրեքը: Հէնց այդ բանը ստիպեց
պրինցուհուն վճռական քայլ անել: Որովհետեւ
նախնական արքայական տունը կաթօրիկ
կրօնի է դաւանում, որը ապահարգում չէ ըն-
դունում, այդ պատճառով Լուիզիայի փախու-
ւոր շատ դժուարին կացութիւն է ստեղծում:
Թագաժառանգուհու ուղեկիցը, ֆրանսիական
լեզուի ուսուցիչ Ժիւրօ, Բրիւսէլեան յայտնի
քնտիրիքի գաւառի է: Նրա հօրեղբայրը վճա-
րեց զատարանի անդամ է Բրիւսէլեան Ժի-
ւրօն հօֆմէյստեր էր Իրէզդէնում և ֆրանսիա-
կան լեզուի դասը էր տալիս թագաժառան-
գուհու երեխաներին: Նրա մասին պատմում
են, որ շատ վառ ինքնավրտ է և անձնագոհ
ասպետ:

—Բուրգալէյտում ֆրանսիական հրապարա-
կաթիւ Կիւարի հայերի դրութեան մասին
Թիւրքիայում նորեւ կարգադրած դատախօսու-
թեան առիթով «Pester Lloyd» լրագրում
տպեց կրասպաշտօնական հաղորդագրութիւն,
որի մէջ ասված է, որ դատախօսութեան հեր-
կայ եղող ուղղաբարական պարամէնտի պատ-
գաւաւորները դատախօսին ոչ մի հաւանու-
թեան նշան չեն ցոյց տալիս, որովհետեւ ոչ մի
ունշարացու առթոյն անգամ չէ կարող անց-
նել միջամտել Թիւրքիայի ներքին գործերում
և պաշտպան հանդիսանալ այս կամ այն ազ-
գութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԵՍ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

19 դեկտեմբեր

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Ժամանց ՄԵՃ Իշխան Ալեք-
սանդը Միխայլովիչ իր Ամուսնու և Երեխանե-
րի հետ:

ՅԱՐԻՑԻՆ, Հիւանդների մօտ գնալու ժամա-
նակ դէմադրի բժիշկ Սիլիւշի, ճանապարհը
կորցնելով անապատում, ստեղծ Ընտանիքը
ստանց միջոցների մնաց:

Վիշնև, Պայտանական ճաշից յետոյ կոմս
Լամզորֆի բնակարանում կայացաւ խորհր-
դակցութիւն Գոյուխովիւ հետ: Գոյիւ ուս-
ուցի գեսպանութեան քարտուղար Շչէրբատու-
կու և պայտեղի գեսպան Կապիխաի մասնակ-
ցութեամբ:

«Neue Freie Presse» հաղորդում է, որ այս-
տեղի քաղաքական շրջաններում գոհ մնացին
Լամզորֆի բանակցութիւններով Գոյուխովի-
կու հետ: Սպասում են, որ Ռուսաստանը և
Աւստրիան ետանդով կը դնեն ընթացիկ
մոցնիկու վրա Մակեդոնիայում: Հաստատվում
է, որ Լամզորֆի թախանձանքով խորհուրդ էր
տալիս Սօֆիայում գտնւ լինել բուրգաբանական

Մըստօ. Թեղ յոյսերը արդարանան, աղա:
Նրանք և Գիւլիզար

Գիւլիզար. (Շատաւով մեկնելով). Հայրիկ,
հայրիկ, ուսանելը գալիս են. մեր տան աշտա-
րակից երեւում է, ինչպէս նրանք սարից իջ-
նում են և մեր քաղաքն են մտնում (նկատելով
Մըստի, յիս է փախվում օդով):

Գալուստեանց. Փառք Աստուծո, այս
բաղդաւոր օրին էլ հասանք...

Մըստօ. Ուղիղ ես ասում, աղա, այսօր մի
բաղդաւոր օր է: (Գիւլիզարին): Աղջիկ, ինչի
եւ վրաներում ինձանից, եւ ձեր օջախի բա-
րեկանն եւ Լաւ չէ, աղջիկ, որ այդ տեսակ
բաղդաւոր օրն էլ սրտումը թշնամութիւն եւ
պահանք երանի միշտ բաղդաւոր օրն ունե-
նաւ, բայց եթէ, Աստուած չանէ, ձեր տանը
մի վտանգ պատահի, տնով տեղով եկէք մեր
վրաները, մենք ձեզ կը պաշտպանենք, մենք
ձեր բարեկամներն ենք: Ձեա գալ, աղջիկ...

Գիւլիզար. (Շփոթված եւ աչքերը ցած
գցած). Հայրիկ ես վեր եմ գնում, դուն էլ
կը գնա...

Գալուստեանց (որ խօսակցութեան ժա-
մանակ վեր եր կացել ու անձամբերութեամբ
նայում էր իր աղջկայ ու Մըստի վրա, մօտե-
նում է Գիւլիզարին ու ձեռք է դնում նրա ուսի
վրա). Գնա, գաւազս, գնա, եւ էլ իսկոյն գա-
լիս եւ:

Մըստօ. Ներքի, աղա, որ քեզ անհանգըս-
տացրի: Ես էլ կերթամ... (Վեր է կենում եւ

կառավարութեանը և մակեդոնական կօմիտե-
ան:

Գոյուխովիւ. մօտ նախաճաշից յետոյ Լամզ-
որֆի այցելութիւններ գործեց իտալական և
ֆրանսիական դեսպաններին և այցելուին թո-
ղեց թիւրքաց դեսպանի մօտ, որը հիւանդ է:
Թիւրքաց դեսպանը այցելուին ուղարկեց քա-
տուղարի ձեռքով:

Էրցհերցոգ Փրանց-Ֆերդինանդի մօտ կայա-
ցաւ ճաշի պատիւ Լամզորֆի: Ներկայ էին
քարտուղար Սալիսիկի, Կապիխա ուսուց
դեսպանութեան անդամներին հետ, Գոյու-
խովիկ և պալատական պաշտօնեաները: Ճա-
շից յետոյ Էրցհերցոգ Փրանց-Ֆերդինանդ եր-
կար խօսակցեց հիւրերի հետ:

Վաղը, երեկոյան 9 ժամին, Լամզորֆի ճա-
նապարհ է ընկնում:

Այդուկը վերացնել կօմիտիսի համար գո-
յութիւն ունեցող արգելքները կայսրութեան
երկու մասերի մէջ և 1867 թւի համաձայնու-
թիւնը վերանորոգելու վերաբերմամբ:

Տասերկուերորդ ժամին Լամզորֆի գնաց
Հօֆբուրգ և օրէնհօֆմէյստերի ձեռքով նոր-
հաւորութիւն մատուցեց նոր տարվայ առիթով:
Կոմս Լամզորֆի խորհրդակցեց հիւրանոցում
Գոյուխովիկ և Կապիխա կոմսերի հետ:

Կ. ՊՈԼԻՍ: Մովսիսի մինիստրը ստորագրեց
պայմանագիր Անապոս նաւալիական գործա-
րանի հետ երկու ականանաւեր շինելու, իւրա-
քանչիւր 70,000 ֆունտ ստերլինգ արժողու-
թեամբ: Արտագրութիւնը 24 մղոն ժամանկ կա-
ռուցման պայմանաւամբ—մէկ տարի:

20 դեկտեմբեր

ՄԱՐԻՆ: Սիլիւշիայի զեկուցման մէջ թա-
գաւորին մարտիկեան հարցի վերաբերմամբ
ասված է, որ պետութիւնները ճանաչում են
Սպանիայի միջամտութեան իրաւունքը: Կառա-
վարութիւնը օգտու կը քաղէ այդ դրութիւնից:
Սպանիայի շահերը ապահովելու համար Մարտի-
կու ապագայ ժամանակներում:

ՊԵՐԻՆ: Արտաքին գործերի մինիստրութիւնը
յայտնեց դեսպաններին, որ Տունֆուսեանի պա-
տերազմական պատրաստութիւններին վերաբե-
րեալ լուրերը հիւժ ունեն, թէպէտ և չափազանց-
րած են:

ՊԱՐԻՉ: Լուրէ, դիվանագիտական մարմնի
ներկայացուցիչների ընդունելութեան ժամա-
նակ, չորհակալութիւն յայտնեց պապական
դեսպանի յայտնած բարեմաղթութիւնների հա-
մար, մանաւանդ մարտիրոսիկեան աղետի առի-
թով յայտնած համակրութեան համար: Նոր
տարին սկսվում է բաղդաւոր նշանով:

Կ. ՊՈԼԻՍ: Հիւրի-վաչուն, որի արդարաբա-
րութիւնը և ետանդը ընդհանուր հաւանութիւն
են գտնում, Դորեա մոցրվեց պալատին ներ-
կայացրված անընդունակ պաշտօնեաների ցու-
ցակում:

ՄՈՎԻՍ: Հետեալ վերաբերական համա-
ժողովը նշանակված է Պետերբուրգում 1904
թւին:

Խիստագիր՝ ԱՆԻՐՈՒՆԴԻ ՔԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՈՒԱՀԱԿ ՄԷԼԻՔԱՆԱՐԱՆԵԱՆ

Բանի մի քայլ է անում):

Գալուստեանց. Աստուած քեզ հետ,
Մըստօ: (Գիւլիզարին) գնա՛ք Գիւլիզար (դուրս
են գնում ձախ կողմից):

Մըստօ (մեծաւ). Գնացէ՛ք, գնացէ՛ք, ուրա-
խացէ՛ք, գեսպաններ... Ձեր բաղդաւոր օրերը
երկար չեն տևի: Ռումաները, խօս, միշտ չեն
մնայ այստեղ... Հէնց որ կը հետանան—այդ
բոլորը մեր կը լինի... Ինչ լաւ կրակ կը
տանք այս տանը... Դուն էլ, աղջիկ, իմ ձեռքս
կընդհան, քեզ ոչ մի Աղաջ

